ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (GEF) կողմից ֆինանսավորվող «Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2022 թվականի ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփման և 2023 թվականի ընթացքում նախատեսվող գործողությունների ներկայացման վերաբերյալ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպման

ք. Երևան
23.12.2022թ.

ժամը՝ 10:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ա. Հակոբյան	արտաքին գործերի նախարարության ՄԱԿ-ի և կայուն զարգացման բաժնի պետ
Լ. Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետ
Մ. Մոմջյան	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի պետ
Մ. Ավետիսյան	կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի երկրատարածական տվյալների կառավարման բաժնի պետ
Մ. Սարիբեկյան	շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Իսախանյան	շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Լ. Երեմյան	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային գլխավոր մասնագետ

Գ.Կոշեցյան	բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսաբյուջետային բաժնի ավագ մասնագետ
Կ. Հովսեփյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի ավագ մասնագետ
Խ. Շմավոնյան	արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության ավագ հրահանգիչ
Մ. Գրիգորյան	քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության խորհրդական
Ա. Ղուկասյան	շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության ավագ մասնագետ
Ա. Դոնոյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի թերգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի տնօրենի տեղակալ
Ն. Բակունց	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»-ի (ՀՎԿԱԿ) գլխավոր տնօրենի տեղակալ
Ա. Եսոյան	շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար
Լ. Ներսիսյան	«Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» ծրագրի ղեկավար
Կ. Մանուկյան	«Բնապահպանական ծրագրերի իրականացման» ՊՀ-ի տեխնիկական փորձագետ
Ռ. Եգորյան	Գյումրու համայնքի ղեկավարի օգնական
Տ. Սուքիասյան	«Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» ծրագրի միջազգային խորհրդատու

Հ. Թունյան	«Անցում էլեկկտական շարժունակությանը Հայաստանում» ծրագրի տեղական խորհրդատու
Հ. Օհանյան	ֆինանսների նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Զ. Աբրահամյան	բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության փորձագետ
Հ. Ակարմազյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կայուն զարգացման բնապահպանական ծրագրի խորհրդատու
Լ.Սարգսյան	«Բնապահպանական ծրագրերի իրականացման» ՊՀ-ի դորների հետ համագործակցության բաժնի մասնագետ
Ն. Հարությունյան	Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի տնօրեն

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- «Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» ծրագրի 2022 թվականին իրականացված գործողությունների ամփոփ ներկայացում
- Հայաստանում էլեկտրական շարժունակության զարգացման քաղաքականության նպատակի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող քայլերի ներկայացում
- ՄԱԿ-ի «Կլիմայական փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի կլիմայական փոփոխության մեղմման և հարմարվողականության հարցերով մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում ՀՀ-ում էլեկտրական շարժունակության խթանման հիմնախնդիրների ներկայացում
- Էլեկտրական շարժունակության զարգացմանն ուղղված ազգային ռազմավարության նախնական տարբերակի ներկայացում
- ՀՀ էլեկտրական շարժունակության ոլորտում ներդրումային հոսքերի ակտիվացման համար բարենպաստ պայմանների ստեղծման գործիքակազմի ներկայացում:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ՝

Լ. Ներսիսյանը ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց օրակարգում ներառված հարցերը: Ներկայացնելով «Անցում էլեկտրական շարժունակությանը Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հիմնական նպատակը, Ծրագրի ղեկավարը առավել մանրամասն ծանոթացրեց 2022 թվականի ընթացքում իրականացված միջոցառումների և 2023 թվականի ընթացքում նախատեսվող գործողությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությանը: Լ. Ներսիսյանը հանդիպման մասնակիցներին առաջարկեց Ծրագրի շրջանակներում մշակված և նախապես տրամադրված «ՀՀ էլեկտրական շարժունակության զարգացման» ազգային ռազմավարության նախնական տարբերակի վերաբերյալ ներկայացնել հնարավորինս շատ կարծիքներ, առաջարկներ, դիտողություններ:

Ա. Հակոբյանը հետաքրքրվեց, թե ի՞նչ է իրենից ներկայացրել Ծրագրով իրականացված վերապատրաստումները և ովքե՞ր են եղել շահառուները:

Լ. Ներսիսյանը պատասխանեց, որ վերապատրաստումները եղել են 6 ուղղություններով, որոնցում ներառված են եղել ոլորտի զարգացմանը նպաստող այնպիսի թեմաներ ինչպիսիք են՝ ֆինանսական գործիքները, տեխնիկական հագեցվածությունը, բնապահպանական, գենդերային ուղղվածության վերաբերյալ համակարգված և փոխլրացված գիտելիքների տրամադրումը և այլն: Նշվեց նաև, որ վերապատրաստումներն ընդգրկել են շահառուների հնարավորինս լայն շրջանակ, մասնակիցներն ընտրվել են պետական կառույցներից, քաղաքապետարաններից, մարզպետարաններից, համայնքապետարաններից, հասարակական կազմակերպություններից, մասնավոր և կրթական ոլորտներից: Լ. Ներսիսյանը հավելեց, որ 2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ևս 3 վերապատրաստում:

Մ. Սարիբեկյանը ներկայացրեց 2021 թվականի ՀՀ կառավարության կողմից հաստատված 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունների ծրագիր»-ի վերաբերյալ, որով սահմանվել է մինչև 2030 թվականը 1990 թվականի համեմատ ջերմոցային գազերի արտանետումները 40%-ով կրճատելու թիրախը: Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության ներկայացուցիչը նշեց, որ էլեկտրական շարժունակության խթանումը կլիմայի մեղմման միջոցառումների մաս է կազմելու և էլեկտրական տրանսպորտային միջոցների ավելացման արդյունքում կնվազեն ջերմոցային գազերի արտանետումների մակարդակը: Մ. Սարիբեկյանը ներկայացրեց նաև 2022 թվականի հունվարից մեկնարկած Կանաչ կլիմայի հիմնադրամի /GCF կողմից ֆինանսավորվող «Էլեկտրական տրանսպորտային միջոցների շարժունակության հնարավորությունների հիմնման տեխնիկական խորհրդատվական աջակցություն Հայաստանին» դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ, որով նախարարությանն աջակցություն կցուցաբերվի անհրաժեշտ իրավակարգավորումների մշակման հարցում: Մ. Սարիբեկյանը շեշտեց, որ նախարարությունն առանձնահատուկ կարևորում է էլեկտրական շարժունակության խթանման ուղղությամբ կատարվող աշխատանքները՝ հաշվի առնելով վերջինիս էական դերակատարումը մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման և ջերմոցային գազերի կրճատմանը նպաստելու հանգամանքը:

Անդրադարձ կատարելով էլեկտրական շարժունակության անցման խոչընդոտներին և դրանք հաղթահարելու ուղղությամբ անհրաժեշտ գործիքակազմեր ներդնելուն, կլիմայական քաղաքականության վարչության մասնագետը առավել կարևորեց աշխատանքային խմբում արդյունավետ համագործակցությունը և բոլորի ակտիվ ներգրավվածությունը ռազմավարության մշակման գործում:

Ա. Հակոբյանն անդրադարձավ Ծրագրի և Մ. Սարիբեկյանի կողմից հիշատակած Կանաչ կլիմայի հիմնադրամի /GCF կողմից ֆինանսավորվող «Էլեկտրական տրանսպորտային միջոցների շարժունակության հնարավորությունների հիմնման տեխնիկական խորհրդատվական աջակցություն Հայաստանին» ծրագրի նմանությանը և մտահոգություն հայտնեց միջազգային դոնորների կողմից տրամադրված գումարների նպատակային օգտագործման հանգամանքին:

Լ. Ներսիսյանը պատասխանեց, որ Կանաչ կլիմայի հիմնադրամի /GCF կողմից ֆինանսավորվող ծրագրով հավաքագրվելու է ոլորտում առկա թերությունները և կտրվեն առաջարկներ, իսկ իր կողմից ղեկավարվող Ծրագրի շրջանակներում դիտարկելով այդ առաջարկները՝ մշակվելու է վերջնական փաստաթուղթ՝ ռազմավարության, քաղաքականության, գնումների ընթացակարգի և կարգավորումների տեսքով:

Հ. Թունյանը ներկայացրեց էլեկտրոմոբիլների անցման համար անհրաժեշտ քաղաքաշինական կարգավորումներին, որոնք թույլ կտան զարգացնել էլեկտրական շարժունակության անցման համար պահանջվող ենթակառուցվածքներ: Մասնավորապես, թվարկվեց մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական իրավական ակտեր, որոնք ուղակիորեն առնչվում են էլեկտրոմոբիլների լիցքավորման համար անհրաժեշտ կայաններ կառուցելու նպատակով հողահատկացումներին, հողերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության հետ կապված հարաբերություններին: Ծրագրի տեղական խորհրդատուն ներկայացրեց հիշատակված իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների շրջանակը, որը հնարավորություն կընձեռի ապահովել էլեկտրոմոբիլների սահուն անցումը:

Ն. Բակունցը հետաքրքրվեց, թե արդյո՞ք տեղադրվելիք լցակայանների համար նախատեսվում է որոշակի չափանիշների ընդունում, առաջարկելով ռազմավարության մեջ դրանց նախատեսված չլինելու պարագայում թե՛ ճանապարհներին և թե՛ բնակելի տարածքներում լցակայանների տեղադրման համար նախատեսվող կանոնակարգերում ընդգրկել տեխնիկական պահանջների պարտադիր սահմանում:

Լ. Ներսիսյանը պատասխանեց, որ ի սկզբանե հաշվի է առնվել տեխնիկական պահանջների սահմանման հանգամանքը և պատրաստվել է տեխնիկական առաջադրանքի մեջ ընդգրկվող պահանջների ընդարձակ ցանկ:

Տ. Սուքիասյանը ներկայացնելով օրակարգի հաջորդ հարցը անդրադարձավ աշխատանքային խմբի նախորդ հանդիպմանը քննարկված ռազմավարության հիմնական մոտեցումներում կատարված փոփոխություններին և լրացումներին, մասնավորապես նշեց, որ ուսումնասիրելով միջազգային լավագույն փորձը պատրաստվել են էլեկտրոնային շարժունակության զարգացումը խթանող հիմնական գործիքները: Հանդիպման մասնակիցներին տեղեկացնելով աշխատանքային խմբի ներսում շրջանառված

ռազմավարության նախնական տարբերակի մեջ վերանայված մոտեցումների շրջանակին, Ծրագրի միջազգային փորձագետը հավելեց, որ ռազմավարության նախնական տարբերակից հանվել են ավելացված արժեքի հարկի և մաքսատուրքի արտոնությունների վերաբերյալ դրույթները և նպատակահարմար է կենտրոնանալ գնային փոխհատուցումների մեխանիզմներ ներդնելուն: Տ. Սուքիասյանը մատնանշեց սպասարկման ենթակառուցվածքի առկա սաղմնային վիճակը, որի ֆոնին համոզմունք հայտնեց, որ ներկայացվող համապատասխան մեխանիզմների ստեղծումը առաջարկվող գործիքակազմի համատեղությամբ մարդկանց կուղղորդի դեպի էլեկտրոմոբիլ ձեռք բերելուն: Ներկայացնելով ռազմավարության հիմնական թիրախները Ծրագրի միջազգային խորհրդատուն տվեց նշված թիրախների մեծության ընտրության վերաբերյալ համապատասխան բացատրություններ: Ի թիվս թվարկված թիրախների՝ Տ. Սուքիասյանը հատկապես կարևորեց, պահանջվող ենթակառուցվածքներ ստեղծելու առումով, յուրաքանչյուր մարզը էլեկտրական մեքենաների տեխնիկական սպասարկման մեկ կենտրոնով ապահովումը: Տ. Սուքիասյանը անդրադարձ կատարեց նաև ռազմավարության մեջ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցության համար առաջարկվող վարկավորման բարենպաստ գործիքների ներդրմանը, ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական գործիքակազմին:

Գ.Կոշեցյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք դիտարկվել է հիբրիդային շարժիչով տրանսպորտային միջոցների ձեռք բերելու հնարավորությունը:

Տ. Սուքիասյանը պատասխանեց, որ հաշվի առնելով հիբրիդային շարժիչով մեքենաների միջանկյալ լուծում ապահովելու հանգամանքը և Ծրագրի առջև դրված խնդիրները՝ նպատակահարմար է գտնվել արտոնություններ սահմանել բացառապես էլեկտրական շարժիչով մեքենաների ձեռքբերման համար:

Ա. Եսոյանը նշեց, որ էլեկտրական շարժունակության անցումը նպաստելու է արտանետումների կրճատմանը, որը առավել կարևորվում է երկրի ստանձնած պարտավորությունների կատարման տեսանկյունից: Հավելելով, որ միջազգային հարթակում ձևավորվել է «Արագ անցում էլեկտրոնային շարժունակության» խումբ, Ա. Եսոյանը հույս հայտնեց, որ Հայաստանը կմիանա այդ խմբին, հետևաբար այս ֆոնին հիմնավոր լուծումներ առաջադրելը էլ ավելի է կարևորվում, քան՝ միջանկյալ լուծումները:

Ա. Հակոբյանը հարցադրում կատարեց՝ արդյո՞ք ռազմավարության մեջ նախատեսված մինչև 2030 թվականը նոր էլեկտրական մեքենա ներմուծելու 100 000 թիրախը լուծում է արտանետումների կրճատման խնդիրը:

Տ. Սուքիասյանը պատասխանեց, որ 100 000-ը շատ ամբիցիոզ թիվ է, նույնիսկ դրան հասնելը բավական դժվար է լինելու, հետևաբար ավելի ամբիցիոզ թիրախ ընտրելը իրատեսական չի լինի:

Հ. Ակարմազյանը հարցրեց, թե արդո՞ք նախատեսվում են վերապատրաստման դասընթացներ, որպեսզի պետությունը խթանի ոչ միայն էլեկտրոմոբիլների ներմուծումը, այլև՝ դրանց արտադրությունը երկրի ներսում՝ հավելելով, որ այն կօգնի հետագայում սպասարկման և վերամշակման կամակերպման հարցերը լուծելուն:

Տ. Սուքիասյանը համաձայնվելով Ա. Դոնոյանի տեսակետին՝ խորհուրդ տվեց առաջարկությունը գրավոր ներկայացնել, որպեսզի հետագայում քննարկվի վերջինս ռազմավարական փաստաթղթում ներառելու հարցը:

Հ. Օհանյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք կան վերլուծություններ՝ սուբսիդավորման արդյունքում տնտեսության վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:

Տ. Սուքիասյանը նշեց, որ ռազմավարության մշակմանը զուգահեռ կազմվել է նաև կառավարության որոշման նախագիծ, որով կգնահատվի բյուջեի վրա նախնական ազդեցությունը, ինչպես նաև հետագայում փորձ կարվի տալ նաև թվային գնահատականներ:

Լ. Ավետիսյանը մտահոգություն հայտնեց մինչև 2024 թվականի հունվարի 1-ը ընդհանուր կայանատեղիների առնվազն 10%-ը լիցքավորման կայաններով հագեցվածություն ապահովելու հանգամանքի վերաբերյալ՝ հետաքրքրվելով դրանց ապահովման մեխանիզմերով: Լ. Ավետիսյանին հետաքրքրող հաջորդ հարցը ներկայացված ռազմավարության իրավական հիմքերի ապահովումն էր:

Տ. Սուքիասյանը պատասխանեց, որ սուբվենցիոն գործիքներով հնարավոր կլինի լուծել 10% լիցքավորման կայաններով ապահովելու հարցը:

Հ. Թունյանը նշեց, որ իրավական հիմքերը հիմնականում միջազգային պայմանագրերն են, ներպետական իրավական դաշտի առումով տեղական փորձագետին կտրվի առաջադրանք և ուսումնասիրության արդյունքները լրացուցիչ կներկայացվի աշխատանքային խմբին:

Ա. Եսոյանը հարցադրում արեց՝ արդյո՞ք էլեկտրոմոբիլների թափոնների օգտագործման վերաբերյալ ռազմավարության մեջ որևէ մեխանիզմ նախատեսվել է և ի՞նչ հիմնավորումներով:

Տ. Սուքիասյանը պատասխանեց, որ անդրադարձ կա միայն մարտկոցների մասով՝ հավելելով, որ առավել առաջնակարգ է համարվել վերամշակման կարողությունների ստեղծման խթանումը:

Լ. Ներսիսյանը ամփոփելով հանդիպումը, աշխատանքային խմբի անդամներին առաջարկեց հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ՝ ռազմավարության տարբերակը լրամշակելու և հետագա քննարկման դնելու համար: Լ. Ներսիսյանը տեղեկացրեց, որ լրամշակված տարբերակը կուղարկվի աշխատանքային խմբի անդամների էլեկտրոնային փոստին և հավելեց, որ Ծրագրի ղեկավարությունն անհրաժեշտության դեպքում պատրաստ է նոր քննարկում կազմակերպել:

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԲՈՒԴՈՅԱՆ

Արձանագրեց՝
Ռ. Իսախանյանը